

Կարծիք

Լուսինե Գեղամի Մադաթյանի

**«Ժամանակ հասկացույթի առկայացումը բրիտանական
հեքիաթներում (հայկական հեքիաթների գուգադրությամբ)»**

ժ. 02. 07 «Ռոմանագեղմանական լեզուներ»

**մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի
հայցման ատենախոսության մասին**

2008 թվականից սկսած Հայաստանում ձևավորվում է միջգիտակարգային նոր ճյուղ՝ լեզվաբանագիտություն, որի ուսումնասիրության կենտրոնում է ինքնատիպ և տարբերվող բանահյուսական լեզվանյութի լեզվաբանական քննությունը: Տարիներ շարունակ Հայաստանում լեզվաբանագիտական հետազոտությունները մշտապես հյուսվել են ամենաարդի ուսումնասիրությունների շուրջ և այսօր էլ, սույն հետազոտությունը առնչվում է լեզվաբանական նոր ուղղություններից մեկի՝ ճանաչողական լեզվաբանության հետ:

Ժամանակակից գիտական հանրությունն առավել կարևորում է գիտելիքի մարդակենտրոն հարացույցը, ինչն էլ նպաստում է լեզվաբանական հետազոտություններում ճանաչողական մոտեցման լայն տարածմանը: Հաշվի առնելով մարդուն բնորոշ լեզվական առանձնահատկությունները և մտավոր գործընթացները՝ ճանաչողական լեզվաբանությունը ինքնին դուրս է գալիս բուն լեզվաբանության շրջանակներից: Նրա տարբերակիչ առանձնահատկություններից է միջառարկայական բնույթը՝ անհատական հետազոտություններում մի քանի ոլորտները մեկ ամբողջության մեջ միավորելու միտումը:

Միջգիտակարգային ուսումնասիրությունները ժամանակակից գիտության պահանջն են և ապահովում են վերջինիս բնականոն զարգացումը:

Ներկա ատենախոսությունը նվիրված է բրիտանական ժողովրդական հեքիաթների համատեքստում /հայկական նյութի համադրությամբ/ ժամանակ հասկացույթի առկայացման ուսումնասիրությանը՝ ճանաչողական լեզվաբանության լույսի ներքո:

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել ժամանակի հայեցակարգավորման և արտապատկերման տարաբնույթ ձևերը ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից բրիտանական հեքիաթների համատեքստում՝ հայկականի գուգադրությամբ:

Բանասիրական հետազոտության հենց ճանաչողական մոտեցումն է, որ թույլ է տալիս ավելի խորը ներթափանցել ուսումնասիրվող երևույթի՝ տվյալ պարագայում ժամանակ հասկացույթի արտահայտման առանձնահատկությունների մեջ և տալ դրան ավելի խորքային և համարժեք նկարագրություն հեքիաթի համատեքստում: Ատենախոսության առանցքում այն լեզվանյութն է, որի միջոցով հնարավոր է հասկանալ շրջապատող աշխարհը և դրանից ստացված տեղեկատվությունը մեկնել հասկացական մակարդակում: Հետևաբար, սույն ատենախոսությունն ուղղված է ժամանակ արտահայտող լեզվամիջոցների առավել բազմաշերտ ու խորքային մեկնությանն ու բանահյուսական պատումի մակարդակում ժողովրդական աշխարհընկալման և ճանաչողության ուրույն կերպի բացահայտմանը՝ ինչն էլ ապահովում է աշխատանքի արդիականությունը:

Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ հեքիաթի տեքստը քննվում է ճանաչողական լեզվաբանության լույսի ներքո, որի ընթացքում վեր են հանվել ժամանակ հասկացույթի առկայացման գուգամետ ու տարամետ հատկանիշները բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթներում:

Հետազոտությունը կատարելու համար աշխատանքում կիրառվել են ճանաչողական մեկնաբանության, ճանաչողական կադապարաստեղծման, համեմատության և գուգադրման, համատեքստային վերլուծության մեթոդները: Ատենախոսության համար որպես փաստական նյութ է ընտրվել բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթները: Զուգահեռաբար բերվել են նաև համարժեք

օրինակներ հայկական հեքիաթներից քննությունը առավել համոզիչ դարձնելու նպատակով:

Աենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, ծանոթագրությունից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլուխը («Ժամանակ հայեցակարգի տեսական հիմքերը») բաղկացած է չորս ենթագլխից: Այս գլխում դիտարկվում են ճանաչողական լեզվաբանության տարբեր մոտեցումներ և տեսական դրույթներ: Ներկայացվում է տարբեր գիտակարգերում ժամանակի և տարածության փոխկապվածության վերաբերյալ ընդհանրական տեսանկյուններ: Նշված գլխում նաև քննության են առնվում լեզվաբանագիտություն գիտակարգի ձևավորման հիմնական դրույթները և հիմանվորվում է հեքիաթանյութում ժամանակ հասկացույթի ուսումնասիրությունը: Հեղինակը գիտակցում է բանահյուսական հեքիաթների յուրահատկությունները և տեսական հիմքեր է նախապատրաստում գործնական հետազոտության համար: Բանահյուսական նյութը, ի տարբերություն գրական՝ հեղինակային տեքստերի, օժտված է համընդհանրական բնույթով, և այստեղ հնարավոր է գտնել համանման նմուշներ ներկայացնող տեքստանյութ, որը անվիճարկելի առավելություն է հետազոտողի համար:

Երկրորդը գլուխը, որ վերնագրված է «Ժամանակի առկայացման տարածական հայեցակերպը», բաղկացած է երեք ենթագլխից: Այստեղ աստենախոսն ուսումնասիրում է բառային միջոցներով ժամանակ հասկացույթի առկայացման առանձնահատկությունները և ձեռք բերված արդյունքները դիտարկում է հեքիաթի տարածաժամանակային բաղադրիչների զուգադրության համատեքստում: Կատարվել է հեքիաթի սյուժեի ծավալման տարածական և ժամանակային ուղիների վերլուծություն, որի արդյունքները ներկայացված են գծապատկերների միջոցով: Նկարագրվում են բրիտանական և հայկական հեքիաթանյութում շրջանառվող կայուն բանաձևերի կառուցվածքային և գործառութային առանձնահատկությունները:

Երրորդ գլուխ՝ «Ժամանակի հոսքի խոտորումները բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթներում», ունի երկու ենթագլուխ, որտեղ ուսումնասիրվում է ժամանակի հայեցակարգավորումը և առկայացումը հասկացական

փոխաբերությունների և փոխանունությունների միջոցով: Երկրորդ ենթագլխում ատենախոսը քննում է հեքիաթի ժամանակի ակնթարթային ու դանդաղ ընթացքը, ինչպես նաև ժամանակային տարընկալումը որպես փոխաբերական կադապար՝ իր պատկերասխեմատիկ կառուցվածքով:

Առանցքային կարևորություն տալով ճանաչողական լեզվաբանությանը և Յակոբսոնյան գլխավոր դարձույթներին՝ փոխաբերությանն ու փոխանունությանը, նորովի քննվել են և առանձնացվել են նշված դարձույթները:

Ատենախոսի ակնհայտ ձեքբերումներից կարելի է համարել Ֆիլմորի ճանաչողական կադապարների տեսությունից բխող *ժամանակը հեքիաթում* պատկերասխեմաների ուսումնասիրությունը հեքիաթանյութի հիման վրա: Այսպես՝ ատենախոսը հեքիաթում ժամանակային շեղումները քննելիս առաջարկում է հետևյալ փոխաբերական կադապարները՝ *ակնթարթայնությունը ժամանակի խնայողություն է* (հիմքում՝ *կախարդանք-ակնթարթայնություն-ժամանակի խնայողություն* պատկերասխեման), *ժամանակի դանդաղ հոսքն առեղծված է* (հիմքում՝ *իրական ժամանակի փոփոխություն-ժամանակի դանդաղեցում-իրական ժամանակի վերականգնում* պատկերասխեման) և *ժամանակը տարընկալում է փոխաբերական կադապարը* (հիմքում՝ *ժամանակ-այլ գործողություն-ժամանակի այլընկալում* պատկերասխեման):

Ատենախոսությունն ինքնուրույն և կայացած ուսումնասիրություն է՝ հազեցած հանգամանակից և խորքային վերլուծություններով: Այն գրված է գրագետ և պատշաճ գիտական լեզվով, եզրերը, այդ թվում նաև նորաստեղծ եզրույթները տեղին են և դիպուկ են գործածված: Լուսինե Մադաթյանը դրսևորել է իրեն որպես լեզվաբանագիտության և ճանաչողական լեզվաբանության նվիրյալ և հուսով ենք կշարունակի իր հետազոտությունը՝ խորացնելով նշված ոլորտների միջգիտակարգային քննությունը:

Այժմ սեղմ կանգ առնենք որոշ նկատառումների վրա, որոնք պայմանավորված են աշխատանքը առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

- Ցանկալի կլիներ, որ ատենախոսի ուշադրությունից չվրիպեր մի շատ ինքնատիպ բրիտանական հեքիաթ «Սըր Գավեյնը և Կանաչ ասպետը» («Sir

Gawain and the Green Knight”), որտեղ ժամանակն այլ կերպ է ընթանում ամբողջ ներսում: Ամբողջ կախարդված տարածք է, որտեղ ժամանակի ընկալումը խաթարված է արտաքին աշխարհի ժամանակի հետ համեմատած: Սա հետաքրքիր օրինակ կլիներ վերլուծության համար, որին կարելի էր համարժեք պատկեր-սխեմա տալ՝ բնական ժամանակ-ամբողջ/ փակ տարածք/-այլ ժամանակ:

- Հայկական հեքիաթանյութից ցանկալի կլիներ, որ ատենախոսը ներառեր Գուգարքից գրառված «Միամիտ գեղցու խելոք աղջիկը» հեքիաթը /ՀԺՀ, հ. 8, էջ 586-591/, որտեղ կա ժամանակը առաջ մղելու մասին հետաքրքիր փոխաբերություն: Երբ երիտասարդ տղաներն այլաբանորեն ակնարկում են, որ կուզենային սարի համար *նարդիվան* ունենային, միամիտ գյուղացին չի հասկանում ասվածի իմաստը, իսկ նրա խելացի աղջիկը հուշում է «- է, ապի, - ասավ աղջիկը, - էլի գլխի չես ընկել, երբ նա ընենց ասավ, դուն էլ կասեիր, «Ես ծեր եմ, որդի, կարալ չեմ նարդիվան դառնալ, մինդ ու մինդ նարդիվան դառեք, ես էլ վրովը բարձրանամ սարը»: Էն վախտը նրանցից մինը վեր կուներ ու կսկսեր մի լավ հեքիաթ, մի նաղլը, յա մի պատմություն: Դուն էլ անգաճ կանեիր ու սարը հենց կբարձրանայիր, որ չէիր իմանալ, թե, ոնց բարձրացար: Էդ կդառնար քեզ համար նարդիվան»: Այս հեքիաթում ժամանակն այլ ընկալում կարող է ունենալ հետաքրքիր զբաղմունքի պարագայում:
- Ցանկալի կլիներ, որ ատենախոսության մեջ անդրադարձ կատարվեր ժամանակի ընկալման տարիքային առանձնահատկություններին: Ակնհայտ է որ, երեխաները և մեծահասակները ժամանակը այլ կերպ են ընկալում, թեպետ հասկանալի է որ, ժողովրդական հեքիաթում դժվար է գտնել նման օրինակներ, քանի որ, այս տիրույթում հիմնականում մանուկ հերոսները քիչ են հանդիպում:
- Աշխատանքում տեղ են գտել տեխնիկական բնույթի բացթողումներ, ինչպես օրինակ, 33 էջում հղում է արվում «Mkhitarian, Madatyan 2022» հոդվածին, գրականության ցանկում կա երկու հոդված «Mkhitarian, Madatyan 2022» և պարզ

չէ, թե որ հողվածի մասին է խոսքը: Նման դեպքերում հողվածները համարակալվում են անճշտություններից խուսափելու համար:

Վերը նշվածն ամենևին չի նվազեցնում ատենախոսի կատարած խորքային ուսումնասիրության արժանիքները: Լուսինե Մադաթյանի ատենախոսությունը՝ շնորհայի, բովանդակալից և կայացած աշխատանք է, աչքի է ընկնում յուրատիպ հարցադրումներով, տեսական եզրահանգումների հազեցվածությամբ: Նրան հաջողվել է իրականացնել ամփոփ հետազոտություն, որի արդիականությունը, նորույթը, գիտական արժեքը, ինչպես նաև շարունակելության ներուժը կասկած չեն հարուցում: Նյութի պատկառելի ծավալով, իր միջգիտակարգային բնույթով և բովանդակությամբ, աշխատանքի վերլուծական ու մեկնողական մասի հազեցվածությամբ Լուսինե Մադաթյանի ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական աշխատանքին ներկայացվող պահանջները: Սեղմագիրը և ներկայացված տպագիր հողվածները ևս համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Ասվածը հնարավորություն է տալիս միջնորդել Լուսինե Մադաթյանին ԵՊՀ-ում գործող ԲՈԿ-ի 009 մասնագիտական խորհրդին պաշտպանության ներկայացրած «Ժամանակ հասկացույթի առկայացումը բրիտանական հեքիաթներում (հայկական հեքիաթների գուգադրությամբ)» թեմայով թեկնածուական ատենախոսության համար շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանը Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտության գծով:

Խաչատուր Աբովյանի անվան

Հայկական պետական մանկավարժական համալսարան

Ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի

վարիչի պ/կ, Բ.Գ.Թ., դոցենտ

Մ. Մուր Գոհար Մելիքյան

Հաստատվում է Բ.Գ.Թ. դոցենտ Գ.Է. Մելիքյանի ստորագրությունը:

ՀՊՄՀ գիտական քարտուղար

Մ. Մուր

Մարիամ Իսայիրյան

12 Դեկտեմբեր 2023 թ.

